

Մանկավարժական պրակտիկան մասնագիտական մանկավարժական ներուժի ձևավորման և գարգացման համակարգում

Հակոբյան Ֆրիդա

Հանգուցային բառեր. *մանկավարժական մասնագիտական ուսումնական հաստատություն, մանկավարժ, մանկավարժական կրթություն, մանկավարժական պրակտիկայի գործառույթներ, մանկավարժական գործունեություն, ընդհանրական և մասնագիտական կումպետենցիաներ, մասնագիտական գարգացում*

Յուրաքանչյուր պետության գարգացումը պայմանավորված է կրթության որակով, իսկ վերջինս ապահովող առաջնահերթ դերակատարները մանկավարժներն են: Դա է պատճառը, որ կրթության ոլորտի ամենաքննարկված հիմնահարցերը վերաբերում են մանկավարժների պատրաստման գործընթացին և այդ ոլորտում կրթության որակին: Մանկավարժական մասնագիտական ուսումնական հաստատություններում մանկավարժի պատրաստման գործընթացի որակով է պայմանավորված մանկավարժի մասնագիտական գործունեության սկիզբն ու հետագա ողջ մասնագիտական գործունեության հաջողությունը, ենթադրաբար նաև ուսումնառողների առաջադիմությունն ու կրթական վերջնարդյունքները:

Որակյալ մասնագիտական մանկավարժական կրթության կազմակերպումը համարվում է կրթության ոլորտի ամենաբարդ խնդիրներից ու այդ ոլորտի հիմնախնդիրների ամենաճիշտ լուծումներից մեկը [4]: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ մանկավարժական կրթությունը համակարգաստեղծ ոլորտ է, այն պատրաստում է մանկավարժներ, որոնք հանրակրթության բնագավառում իրենց գործունեության միջոցով պետք է ձևավորեն և դաստիարակեն հասարակության ակտիվ և պատասխանատու քաղաքացիներ, ինչպես նաև բարձրագույն կրթության բնագավառում իրենց գործունեության միջոցով ապահովեն հասարակության ու պետության կենսագործունեության բոլոր ոլորտների համար կադրերի պատրաստման որակը:

Մասնագիտական մանկավարժական կրթության հիմնական նպատակն է որակավորված և մրցունակ, մասնագիտական գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին տիրապետող, ազգային (պետական) և միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական գործունեության իրականացմանն ու շարունակական մասնագիտական աճին պատրաստ մանկավարժների ձևավորումը [1, 60-61]: 21-րդ դարում առավել քան երբևէ մանկավարժական կրթության հիմնախնդիրները դարձել են լայնածավալ հետազոտությունների առարկա՝ պայմանավորված կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումներով և մանկավարժի նոր կերպարի ձևավորման անհրաժեշտությամբ: Մասնագիտական մանկավարժական կրթության կազմակերպման ավանդական մոտեցումները հաճախ առաջացնում են դժգոհություններ՝ հասարակական պահանջարկը չբավարարելու պատճառով, և հիմնավոր փաստարկներ են առաջադրվում՝ ստեղծելու ամբողջությամբ նոր և առավել արդյունավետ մասնագիտական մանկավարժական կրթության համակարգ, որը կնպաստի տեսության ու

պրակտիկայի փոխկապակցմանը [5, 1021]: Մանկավարժական կրթության կարևորագույն բաղադրիչներից է մանկավարժական պրակտիկան, որն ուղղված է տեսության և պրակտիկայի փոխկապակցմանը, հետևապես նաև ապագա մանկավարժների ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանն ու զարգացմանը:

Կարևորելով մասնագիտական մանկավարժական կրթության ընթացքում կազմակերպվող պրակտիկայի դերը մանկավարժի մասնագիտական մանկավարժական ներուժի ձևավորման և զարգացման համակարգում՝ պետք է նշել, որ մանկավարժի մասնագիտական պատրաստումը միայն գործնական նյութերով և տեսական գիտելիքների փոխանցմամբ անհնար է իրականացնել, ուստի խիստ կարևոր է գործնական աշխատանքը՝ ուղղված մանկավարժի մասնագիտական գործունեության անհատական ոճի ձևավորմանը: Ինչպես նշել է Կ.Դ.Ուշինսկին, հնարավոր է սովորել դասավանդման մեթոդը գրքից կամ մանկավարժի հաղորդած նյութից, սակայն այդ մեթոդը կիրառելու հմտությունները ձևավորվում են երկարատև պրակտիկայի ընթացքում [3]: Արդյունավետ պրակտիկան նպաստում է ապագա մանկավարժի ճանաչողական, հետազոտական, հաղորդակցական հմտությունների ձևավորմանը՝ իրականացնելով մի շարք գործառնություններ, որոնցից Ե.Վ. Բոնդարևսկայան առանձնացնում է հետևյալները՝ *աղայպտացիայի (հարմարեցման), ուսումնառության, դաստիարակչական, անհատական զարգացման, ռեֆլեքսիվ (անդրադարձի)* [2]: Այսպիսով, մանկավարժական պրակտիկան միտված է ապագա մանկավարժների տեսական գիտելիքների շրջանակի ընդլայնմանը, կրթադաստիարակչական գործունեության տեսության և մեթոդաբանության իմացության խորացմանն ու գործնականում դրանց փոխկապակցմանը: Մանկավարժական պրակտիկայի խնդիրներն են ապագա մանկավարժ ուսանողների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման և զարգացման պայմանների ապահովումը, ուսումնառողների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքները կազմակերպելու հմտությունների և մասնագիտական գործունեության անհատական ոճի ձևավորումը, մասնագիտական զարգացումն ու կատարելագործումը:

Մանկավարժական պրակտիկայի ընթացքում մի կոլեկտիվից՝ ուսանողական միջավայրից անցումը մյուս՝ մանկավարժական կոլեկտիվ, բավականին բարդ գործընթաց է, որը կարելի է բնութագրել մի շարք դժվարություններով: Դրանք հիմնականում վերաբերում են մանկավարժական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով կրթական տարբեր բաղադրատարրերի (հոգեբանամանկավարժական, առարկայական, մշակութային և մեթոդաբանական) գիտելիքների համադրմանը: Աշակերտների հետ աշխատանքը պահանջում է ֆիզիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական գիտելիքների համակցում, ուստի մանկավարժն իր գործունեության ընթացքում պետք է կարողանա արդյունավետ կերպով համադրել և կիրառել այդ գիտելիքները: Սովորաբար գործնականում բավականին դժվար է լինում ապագա մանկավարժների համար այդ գիտելիքների համադրումը. դա ունի իր խորքային պատճառները: Առաջին՝ մասնագիտական մանկավարժական կրթության ընթացքում վերոնշյալ գիտելիքները հաղորդվում են առանձին դասընթացների շրջանակներում, և ուսանողները կրթադաստիա-

րակչական գործընթացի վերաբերյալ ամբողջական պատկերացում չեն կարողանում կազմել: Երկրորդ տեսական գիտելիքները գործնականի փոխակերպելու ու դրանք կիրառելու դժվարությունն է, որը կարելի է բացատրել մասնագիտական մանկավարժական կրթության ընթացքում կազմակերպվող գործնական պարապմունքների սակավաթվությամբ:

Սկսնակ մանկավարժի մասնագիտական գործունեության ընթացքում ծագող դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ հաճախ մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների մանկավարժական պրակտիկան ձևական բնույթ է կրում, քանի որ պրակտիկայի ընթացքում նրանց ներկայացվում է, թե ինչպես պետք է կազմակերպել դասը, կրթադաստիարակչական գործընթացը, ինչպես համագործակցել բոլոր մասնագետների հետ պրակտիկայի խնդիրների լուծման համար, ինչպես նաև պրակտիկայի ընթացքն ամփոփող զեկույցի պատրաստման կարգը: Ձևական բնույթ են կրում նաև պրակտիկային մասնակցած ուսանողների ներկայացրած զեկույցները, քանի որ հիմնականում բացակայում են ինքնուրույն եզրակացությունները, ուսուցիչների և աշակերտների փոխգործունեության դիտման ու վերլուծության ամբողջական արդյունքները: Հաճախ պրակտիկայի մասնակցած ուսանողները դժվարանում են վերլուծել իրենց և մյուս ուսանողների պրակտիկայի ընթացքը, բացահայտել այդ գործընթացում առկա թերացումները, որոնք հաճախ վկայում են նաև ապագա մանկավարժի անտարբերությունը կրթադաստիարակչական գործունեության նկատմամբ, ինչպես նաև ինքնակատարելագործվելու ցանկության բացակայությունը:

Անշուշտ, վերոնշյալ խնդիրների հիմնական պատճառը կարող է լինել այն, որ մանկավարժական մասնագիտական ուսումնական հաստատությունների որոշ կրթական ծրագրեր հաշվի չեն առնում մասնագիտական կրթության ընթացքում շարունակական մանկավարժական պրակտիկայի անհրաժեշտությունը: Մինչդեռ մանկավարժների պատրաստման գործընթացում ցածր կուրսերում պրակտիկայի բացակայությունը կարող է բացասաբար ազդել մանկավարժների մասնագիտական պատրաստման որակի և արդյունավետության վրա:

Սույն հոդվածի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունից պարզվում է, որ շարունակական մանկավարժական պրակտիկայի կազմակերպման մոդել է կիրառվում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում. բակալավրի կրթական ծրագրով մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է՝ սկսած երկրորդ կուրսից մի քանի շրջափուլերով՝ ուսումնաձանաչողական, կիրառական, ամփոփիչ, իսկ մագիստրատուրայի կրթական ծրագրով՝ մանկավարժական-դասախոսական և հետազոտական շրջափուլերով: Մասնագիտական մանկավարժական մյուս ուսումնական հաստատություններում նույնպես կարող է կիրառվել նմանօրինակ մոդել, որը հնարավորություն կտա մանկավարժական պրակտիկան իրականացնել շարունակականության և հաջորդականության սկզբունքներով, մասնագիտական կումպետենտության աստիճանական զարգացման մեխանիզմով:

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բակալավրի 4-րդ կուրսի ուսանողների շրջանում անցկացված հարցումը

փաստում է, որ մանկավարժական կրթության ընթացքում շարունակական պրակտիկայի կազմակերպումը և իրականացումն էապես նպաստել է նրանց գործնական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժական պրակտիկայի ընթացքում կարող են մի շարք գործոններ խոչընդոտել ապագա մանկավարժի ստեղծագործական գործունեության իրականացման ու համապատասխան հմտությունների ձևավորման գործընթացը: Ուսանողներն այդ գործոնների շարքում առանձնացրել են հետևյալները՝ ապագա մանկավարժի անվստահությունը սեփական ուժերի նկատմամբ, տրված սխեմաներով և մեխանիզմներով առաջնորդվելը՝ առանց ստեղծարար մտեցում ցուցաբերելու, փորձառու մանկավարժների կողմից վերահսկողության և դիտողությունների արժանանալու, սխալ ընկալվելու վախը, հուզազգայական վիճակը կառավարելու դժվարությունները, սեփական պահանջմունքների և հետաքրքրությունների վրա չափից շատ կենտրոնանալը: Ուստի մանկավարժական պրակտիկայի ընթացքում օրինակների, զրույցների և/կամ համապատասխան առաջադրանքների միջոցով մեթոդիստները, մանկավարժները և հոգեբանները պետք է սովորեցնեն ապագա մանկավարժ ուսանողներին, թե ինչպես կարելի է հնարավորինս նվազեցնել խոչընդոտող այս գործոնների ազդեցությունն իրենց մասնագիտական գործունեության վրա:

Ապագա մանկավարժների մանկավարժական պրակտիկայի վերաբերյալ իրականացված մասնագիտական ուսումնասիրությունները հիմնականում վերաբերում են պրակտիկայի ընթացքում ապագա մանկավարժների գործառույթներին: Սակայն հարկ ենք համարում անդրադառնալ նաև մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարի դերին. նա գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր դերակատարներից է, ստուգում է հանձնարարությունների կատարումը, աջակցում է գիտահետազոտական աշխատանքների կատարմանը, վերահսկում է մանկավարժական պրակտիկայի ողջ ընթացքը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ԱՄՆ-ում «Ուսուցիչների որակի համար պատասխանատու խորհուրդը» (National Council on Teacher Quality)¹ սահմանել է մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարներին ներկայացվող մի շարք պահանջներ, որոնցից են՝

- Յուրաքանչյուր մասնագիտական մանկավարժական ուսումնական հաստատություն պետք է ձևավորի տարբեր ուսումնական հաստատություններից ուսուցիչների և դասախոսների կայուն կազմ, որի հետ շարունակաբար կհամագործակցի և պարբերաբար կվերապատրաստի:
- Մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարները (ուսուցիչները կամ դասախոսները) պետք է ունենան նվազագույնը երեք տարվա դասավանդման փորձ, ինչպես նաև գործընկերների կողմից տրված երաշխավորագիր, որի հիման վրա կստանան պրակտիկական ղեկավարելու թույլտվություն:
- Մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարները պետք է ունենան մանկավարժության ոլորտում իրականացված հետազոտություն-

¹ <https://www.nctq.org/>

ներ, համապատասխան մասնագիտական և ընդհանրական կոմպետենցիաներ, կարողանան պրակտիկային մասնակցող ուսանողների հետ համագործակցել և ապահովել հետադարձ կապ:

ՀՀ-ում մանկավարժական մասնագիտական ուսումնական հաստատությունները նույնպես կարող են համագործակցության արդյունքում մշակել ապագա մանկավարժների մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարներին ներկայացվող պահանջներն ամփոփող նմանօրինակ փաստաթուղթ, որի հիման վրա հնարավոր կլինի ընտրել մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարներին: Բացի այդ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մանկավարժական պրակտիկայի ավարտին սովորաբար ուսանողներն են գնահատվում մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարի կողմից, առաջարկվում է գնահատել նաև մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարներին: Ուսանողները կարող են հարցաթերթի միջոցով գնահատել նրանց՝ պատասխանելով մի քանի հարցերի. որքանով է պրակտիկայի ղեկավարը կարողանում աջակցել ուսանողներին պրակտիկայի ընթացքում ծագող խնդիրները հաղթահարելուն, նպաստել նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, ուղղորդել նրանց հետազոտական աշխատանքներում: Ստացված պատասխանները հնարավորություն կտան պարզելու՝ որքանով է կարողանում պրակտիկայի ղեկավարն ապահովել արդյունավետ մանկավարժական հաղորդակցում ուսանողների հետ, արդյունավետ համագործակցություն և հետադարձ կապ: Ստացված արդյունքների հիման վրա մասնագիտական մանկավարժական ուսումնական հաստատությունում կորոշվի՝ որքանով է նպատակահարմար շարունակել տվյալ մասնագետների հետ համագործակցությունը:

Մանկավարժական պրակտիկան պետք է իրականացվի անձնակենտրոն մոտեցման հիման վրա, կրի ստեղծարար բնույթ, նպաստի մանկավարժական գործունեության անհատական ոճի, պատասխանատվության, ինքնուրույն աշխատելու և կազմակերպչական հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Հռոկվածում առաջարկվող դրույթներից է մինչև մանկավարժական պրակտիկայի կազմակերպումն ապագա մանկավարժների պահանջմունքների ու հետաքրքրությունների, ինչպես նաև նրանց կողմից ակնկալվող վերջնարդյունքների բացահայտմանն ուղղված հարցազրույցի անցկացումը: Ապագա մանկավարժների հետ հարցազրույցի միջոցով պետք է պարզել, թե ինչ են նրանք ակնկալում սովորել պրակտիկայի ընթացքում. դրա հիման վրա կարելի է մշակել մանկավարժական պրակտիկայի անհատական պլաններ: Բնականաբար, պատասխանները տարբերվաճող կլինեն. մի քանիսի համար մանկավարժական պրակտիկան մասնագիտության ընտրության մեջ համոզվելու հնարավորություն է, մյուսների համար՝ անհատական որակների (ստեղծարարություն, ինքնուրույն որոշումների կայացում) դրսևորման, մասնագիտական կոմպետենցիաների զարգացման, շատերի համար՝ հանրային խոսքը հղկելու և վախճ հաղթահարելու միջոց: Ստացված պատասխանները հնարավորություն կարող են տալ պրակտիկայի ղեկավարին ճիշտ պլանավորելու պրակտիկային մասնակցող ուսանողների հետ տարվող աշխատանքը և համապատասխան գործողություններ նախաձեռնել:

Այսպիսով, մանկավարժական պրակտիկան էական նշանակություն ունի

մանկավարժի մասնագիտական կայացման գործընթացում. ամրապնդում է ուսուցչի մասնագիտության նկատմամբ դրական վերաբերմունքը, զարգացնում է դպրոցում կրթադաստիարակչական գործընթացն ինքնուրույն կազմակերպելու, ուսուցման ու դաստիարակության սկզբունքների և օրինաչափությունների հիման վրա դասն ինքնուրույն պլանավորելու կարողություններն ու դասարանը ղեկավարելու հմտությունները, մասնագիտական վարպետության ձևավորման միջոցով նպաստում է մանկավարժի նորարարական հմտությունների ձևավորմանը: Մանկավարժական պրակտիկան նպաստում է տեսական գիտելիքների համալրմանն ու ընդլայնմանը, հոգեբանական, մանկավարժական և մեթոդական գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ու հմտությունների զարգացմանը: Հետևաբար, մանկավարժական պրակտիկայի վերջնական արդյունքը պետք է լինի ապագա մանկավարժի՝ իր մասնագիտության ընտրության մեջ հստակ համոզվածությունն ու կրթադաստիարակչական աշխատանք իրականացնելու մասնագիտական պատրաստվածությունը:

Հաշվի առնելով մանկավարժական պրակտիկայի կազմակերպման գործընթացում առկա վերոնշյալ բացթողումներն ու թերությունները՝ պետք է շարունակակաբար արդիականացնել պրակտիկայի պայմանները, որոնք կնպաստեն մասնագիտական մանկավարժական ներուժի ձևավորմանն ու զարգացմանը: Մանկավարժական պրակտիկայի արդյունավետության բարձրացման նպատակով կարելի է իրականացնել շարունակական պրակտիկա մասնագիտական մանկավարժական կրթության ամբողջ ընթացքում, պրակտիկայի կազմակերպման նախնական փուլում ապագա մանկավարժների կարիքների վերհանում և դրանց հիման վրա անհատական պլանների մշակում, մանկավարժական պրակտիկայի անմիջական ղեկավարներին ներկայացվող պահանջների հստակեցում, ուսանողների կողմից պրակտիկայի անմիջական ղեկավարների գնահատում, ուսումնական հաստատությունների և պրակտիկայի ղեկավարների միջև համագործակցության ապահովում և նրանց վերապատրաստումների կազմակերպում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Балакирева Э. В., Педагогический подход к развитию теории педагогического образования, Человек и образование, 2009, № 3 (20), ст. 60–64.
2. Бондаревская Е. В., Теория и практика личностно-ориентированного образования, Ростов н/Д, 2000, 352 с.
3. Ушинский К.Д., Педагогические сочинения: В 6-ти томах, Том 5, М.: Педагогика, 1990, 528 с.
4. Fullan M., 1993, Change Forces: Probing the Depths of Educational Reform. London: Falmer Press, 172 pages.
5. Korthagen F., Loughran J., Russell T., Developing Fundamental Principles for Teacher Education Programs and Practices, Teaching and Teacher Education, 22, 2006, pp. 1020-1041.

Педагогическая практика в системе формирования и развития профессионального педагогического потенциала

Акопян Фрида

Резюме

***Ключевые слова:** профессиональное педагогическое учебное заведение, педагог, педагогическое образование, функции педагогической практики, педагогическая деятельность, общие и профессиональные компетенции, профессиональное развитие*

Педагогическая практика является одним из важнейших факторов профессионального развития будущих педагогов в условиях образовательной реформы и модернизации профессионального педагогического образования. Благодаря педагогической практике студент временно принимает на себя роль учителя и применяет накопленные теоретические знания на практике. Педагогическая практика направлена на формирование и развитие профессиональных компетенций будущих педагогов.

Данная статья представляет роль и значение педагогической практики в процессах формирования и развития профессионального педагогического потенциала. В нем рассматриваются вопросы организации педагогической практики в профессиональных педагогических учебных заведениях и предлагаются рекомендации по их решению для повышения эффективности педагогической практики. Эффективная практика способствует развитию педагогической, когнитивной, исследовательской и коммуникационной компетенции будущих учителей. В целях повышения эффективности педагогической практики можно осуществлять непрерывную практику на протяжении всего профессионального педагогического образования, выявлять потребности будущих педагогов и разрабатывать на их основе индивидуальные планы, уточнять требования к руководителям педагогической практики, обеспечить сотрудничество между руководителями практики и профессиональными педагогическими учебными заведениями.

Pedagogical Internship in Formation and Development System of Professional Pedagogical Potential

Hakobyan Frida

Summary

Key words: vocational-pedagogical educational institution, pedagogue, teacher, pedagogical education, functions of pedagogical internship, pedagogical activity, general and professional competences, professional development

Pedagogical internship is one of the most essential elements in the process of future teachers' professional formation and development in the context of educational reforms and modernization of vocational pedagogical education. Due to the pedagogical internship a student temporarily takes the role of a teacher and uses theoretical knowledge in practice. The pedagogical internship aims at forming and developing professional competences of future teachers.

The article highlights the role and significance of pedagogical internship in the formation and development processes of professional pedagogical potential. It also touches upon the issues of organizing pedagogical internship during vocational pedagogical education, by recommending propositions for increasing the efficiency of the process. Effective practice contributes to the development of pedagogical, cognitive, research and communication competences of future teachers. In order to improve the effectiveness of pedagogical internship, it is necessary to realize continuous practice throughout the entire professional pedagogical education, identify the needs of future teachers and develop individual plans, clarify the requirements for the mentors of pedagogical internship, and ensure cooperation between mentors of pedagogical internship and vocational pedagogical institutions.